Արձանագրություն N 3
ՀՀ ՈԿ ԳՀԱՇՁԲ-21/3 ծածկագրով գնանշման հարցման
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 27 օգոստոսի 2021թ
ժամը 15:30

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Գ.Ավետիսյանը
անդամներ՝ Ա.Սարուխանյանը, Կ.Բաղդասարյանը
քարտուղար՝ Գ. Ջանջուղազյան

I. Հայտերի գնահատման արդյունքների մասին (շարունակություն)

(Գ.Ավետիսյան)

1. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց հայտերով ներկայացված հրավերով պահանջված փաստաթղթերը և արձանագրեց, որ «Մետադոր» ՍՊԸ-ի, Մուրադյան «Շին» ՍՊԸ-ի կողմից հայտերով ներկայացված լրացված ծավալաթերթ-նախահաշիվներում առկա են հետևյալ անհամապատասխանությունները.

1.1 «Մետադոր» ՍՊԸ-ի հայտով ներկայացրած 4-րդ չափաբաժնի համար լրացված ծավալաթերթի 5-րդ, 6-րդ սյունյակների՝ «Ընդամենը գումարը» սյունյակում չափի միավորը <դրամով> է գրված սակայն ծավալաթերթի հաշվարկներում թվերը հազար ՀՀ դրամով է գրված: «Միավորի արժեք» սունյակում չափի միավորը նշված չէ:

3-րդ չափաբաժնի համար լրացված ծավալաթերթի «Ընդամենը գումարը» սյունյակում չափի միավորը <դրամով> է գրված սակայն ծավալաթերթի հաշվարկներում թվերը հազար ՀՀ դրամով է գրված՝ «Միավորի արժեք» սունյակում չափի միավորը նշված է հազ. դրամով:

1-ին չափաբաժնի համար ներկայացված ծավալաթերթի 2-րդ, 4-րդ, 5-րդ և 7-րդ բաժինների կշռի շեղումը չի համապատասխանում հրավերի 4.3 կետով սահմանված պահանջներին՝ բաժինների կշռի շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տաս տոկոսից:

1.2 Մուրադյան «Շին» ՍՊԸ-ի հայտով ներկայացրած 2-րդ չափաբաժնի համար լրացված ծավալաթերթի «Ընդամենը գումարը» սյունյակում չափի միավորը <հազ. դրամով> է գրված սակայն ծավալաթերթի հաշվարկներում թվերը ՀՀ դրամով է գրված: «Միավորի արժեք» սունյակում չափի միավորը նշված չէ:

2. «Մենարշին» ՍՊԸ և «Գունաշեն» ՍՊԸ կոնսորցիումի կողմից հայտով ներկայացված չէ հրավերի պահանջներին համապատասխան՝ իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվները:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

3. Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով վերոգրյալ որոշեց.

ա/ կասեցնել նիստը և ՀՀ ՈԿ ԳՀԱՇՁԲ-21/3 ծածկագրով գնանշման հարցման հրավերի 8.7 կետի համաձայն ծանուցել Մուրադյան «Շին» ՍՊԸ-ին, «Մետադոր» ՍՊԸ-ին, «Մենարշին» ՍՊԸ և «Գունաշեն» ՍՊԸ կոնսորցիումին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

բ/ հայտերի գնահատման արդյունքները ամփոփելու նպատակով գնահատող հանձնաժողովի նիստ հրավիրել շտկված փաստաթղթերը ներկայացնելու օրվան հաջորդող աշխատանքային օրը՝ 2021թ. օգոստոսի 31-ին ժամը 14.30-ին ք. Երևան, Ծովակալ Իսակովի 29, «գնումների խումբ» աշխատասենյակ հասցեով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

Հանձնաժողովի

նախագահ _____ Գ.Ավետիսյան

անդամներ՝ _____ Ա.Սարուխանյան

_____ Կ.Բաղդասարյան

քարտուղար՝ _____ Գ. Ջանջուղազյան